Արձանագրություն N 6
«ՀՀ ԼՄՍՀ-ԲՄԱՇՁԲ-18/1» ծածկագրով գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Սպիտակ 27.11.2018թ.
ժ. 12:00

Մասնակցում են՝
Հանձնաժողովի նախագահ՝ Հ. Միրզոյան
Հանձնաժողովի անդամներ՝ Լ. Համբարյան, Ն. Յարմալոյան
Հանձնաժողովի քարտուղար՝ Արսեն Ավետիսյան

Հիմք ընդունելով ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի 19.11.2018թ. թիվ ԳԲԽ-ԱՄ-2018/90 որոշումը, ՀՀ ԼՄՍՀ-ԲՄԱՇՁԲ-18/1 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը վերսկսում է նշված ընթացակարգի առաջին տեղը զբաղեցրած մասնակցի՝ «ՎԱՀՐԱԴՅԱՆ ՇԻՆ» և «Ոյուտ Սենթր» ՍՊ ընկերությունների կողմից ներկայացված հայտի գնահատումը:

«ՎԱՀՐԱԴՅԱՆ ՇԻՆ» և «Ոյուտ Սենթր» ՍՊ ընկերությունների կողմից ներկայացվել են որակավորման չափանիշների համապատասխանությունը հիմնավորող հրավերով պահանջվող փաստաթղթերը:

Գնահատող հանձնաժողովը ուսումնասիրելով ներկայացված հիմնավորող փաստաթղթերը հայտնաբերել է հետևյալ անհամապատասխանությունները՝ որպես համանման աշխատանքների կատարման պայմանագիր ներկայացվել է 2015 թվականի սեպտեմբերի 23-ին կնքված թիվ ԲԷՑ-ԲԸԱՇՁԲ-15/32 պայմանագիր և այդ պայմանագրի մաս կազմող թիվ 1 Համաձայնագիր, որը կողմերը ստորագրել են 2015 թվականի սեպտեմբերի 4-ին, ինչը նշանակում է, որ պայմանագրի մաս կազմող համաձայնագիրը վավերացվել է ավելի շուտ քան պայմանագիրը, ընդ որում համաձայնագրին կից ներկայացված նոր ծավալաթերթ-նախահաշիվ հավելվածում պայմանագրի կնքման տարեթիվը նշված է 2015 թվականի նոյեմբերի 9-ը: Ինչպես նաև նշված պայմանագրի 1.2 կետով սահմանվում է, որ աշխատանքները պետք է իրականացվեն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներում, սակայն պայմանագրի N 1 հավելվածը աշխատանքների ծավալաթերթ-նախահաշիվն է:

Հաշվի առնելով վերոգրյալը, գնահատող հանձնաժողովը որոշեց.

1. «ՎԱՀՐԱԴՅԱՆ ՇԻՆ» և «Ոյուտ Սենթր» ՍՊ ընկերություններին ծանուցել մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել վերը նշված անհամապատասխանությունները:

Որոշումն ընդունվել է՝ կողմ՝ 3 դեմ՝ 0:

Հանձնաժողովի

Նախագահ՝ _____ Հ. Միրզոյան

Անդամներ՝ _____ Լ. Համբարյան